ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*
(ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ)

ԿԵՏ 41

Սույն կետում նշված կարգավիճակ ունեցող դիմորդները բուհ ընդունվելու դեպքում օգտվում են օրենքներով սահմանված ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունքից.

1) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները կամ ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք (երեխաները)

2) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

ԿԵՏ 42

Ընդունելության քննությունը դրական միավորով հանձնելու դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվում են ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների ծնողները, ամուսինը (կինը), մինչև 27 տարեկան զավակները:

ԿԵՏ 43

Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և վերջին մեկ տարվա ընթացքում զորացրված դիմորդները՝ քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում բուհ են ընդունվում մրցույթից դուրս:

ԿԵՏ 44

Բուհի հետ համապատասխան մասնագիտությամբ (կրթական ծրագիր) կրթական ծառայությունների մատուցման պայմանագրի առկայության և պայմանագիր կնքած կազմակերպության ֆինանսավորման դեպքում համապատասխան մասնագիտությամբ (կրթական ծրագիր) կազմակերպության աշխատողների ընդունելությունը կազմակերպվում է կազմակերպության ներկայացրած անվանացանկի համաձայն՝ առանց ընդունելության քննությունների կամ բուհի սահմանած կարգով: